

Ազգային ժողովը զուգարեցաւ մայր եկեղեցին մէջ ժամը 3,30-ին, նախագահութեամբ պատրիարքական տեղապահ Գաբրիէլ եպ. Անանիանիանի երեւոյթութեամբ 55 երեսփոխաններու, որոնց թիւը շուտով հասաւ 71-ի. Ուսկոյիներու մասին մէջ մեծ բազմութիւն կար: Երեսփոխաններու առթիւ թեր բազմած էին հայ աւետարանականներու ներկայացուցիչներ:

Եկեղեցիի զանգակներուն ձայնովը և նախագահին շնորհակալ յարգանքովը և անմիջապէս յոտորեկայ կարողացեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը Մեծ Յորհեանքի տոնակատարութեան մասին, ինչպէս սակ Մայր երկրին մէջ զարդանք հիմնելու նպատակով այդ տօնի առթիւ հանգանակելիք կրթական ֆոնտին նկատմամբ:

Յետոյ առնապէս տորթի. Տաղաւարեան երկար ճամբը կարողացաւ որով այս պատմական նիստով քաջաւոր հռչակեց հայ տառերու գիւտին 1500-ամեայ միացեալ Մեծ Յորհեանքին ետեւի հանգանակները, Առնապէսը շնորհակալեց իր պատուանակիցները և մաղթեց որ աւելի բազալոր տարիներ, աւելի փայլուն յորհեանքներ տօնենք: Յետոյ սկսաւ պատմական ընդհանուր տեսութիւն մը ընել հայ գրականութեան և տրպարութեան ծագումնի վրայ: Փորձեց ինքնատիպ տեսակէտ մը հռչակել թէ՛ հայ գրականութեան ծագման ոչ թէ 1500-ամեակը, այլ 2800-ամեակն է որ կը տօնենք, որովհետեւ, ըսաւ, Բրիտտոսէ ուրբ զար առաջ նախահայոց Իսապոլիսի թագաւորին ատեն հայերը ունէին սեփական սեպակ 120 հատ տարեկ, որոնք աւելի զիրանականալի էին քան ասորացիներու սեպակներուն 325 տարեկը: Ատոցմով, ըսաւ 200 ասու Ուրարտեան արձանագրութիւնները գտնուած են Այդ տարեկ են, որ հաւանաբար Փոլիքիս անցնելով Արմէն — Նախորդ Լեռնի անցած են: Բրիտտոսէ ուրբ զար առաջ Պապուստի Տէրիզազ թագաւորին ատեն այդ տարեկով գրանցել կային Այդ տարեկը վերջ կորուցեց և թերեւ Ս. Մեսրոպի պրպտած և գտած նշանադրիները քաղած են որուն իսկ այդ տարեկն: Յետոյ առնապէսը շարունակեց ազգային ծանօթ պատմութիւնը. այժմու Մեսրոպեան հայ տառերու գիւտին, յիշելով սակայն միայն պատմագիրներու նկարագրութիւնները ասոց ըննադատութեան: Գովց մեր այրուքէնի կատարելութիւն և տիպեական բոլոր լեզուներուն ծառայելու ընդունակութիւնը, յիշեց թագուհի ամենայն թագուհիներուն հայ թագուհի Կոզմասիանը: Յետոյ երկարորէն պատմեց հայ տպագրութեան սկզբնաւորութիւնը, Ի վերջոյ յիշեցաւ Կաթողիկոսի կոնդակը կրթական ֆոնտին մասին, և յոյս յայտնելով թէ Տանկահայերն ալ օրինակ կրանեն Կովկասահայերն, որոնք կրթական ֆոնտին հանգանակութիւնը մօտ մէկ միլիոն ռուպլով նացուցած են, — բացառած նշուակեց սակ կրթական ֆոնտի հանգանակութիւնը:

Յետոյ կարգադրեցաւ Օրմաշու արքեպիսկոպոսիտի, որով այս յայտնելով իր նիւնդութեան պատճառով բացակայ գտնելը կը շնորհակալեց Յորհեանքը:

Տորթի. Թորգոմեան գրով մը կ'առաջարկէր Մեծ Յորհեանքի առթիւ շնորհակալութեան հետագային զարմանի կրթական նախարարներուն այն երկրներու որոնք համալսարաններուն մէջ հայերէն լեզուն կառուցելու (Փարիզ, Փիէթերսպուրգ, Պերլին, Լոտտոն և այլն), նոյնպէս հայալեզու օտարականներուն, ինչպէս Մէյնըն, Մարին, Կոնիպէրն, Մաքսընը և այլն: Ժողովը ընդունեց այդ առաջարկը և յանձնարարեց որ Պատր. Տեղապահը գործադրէ այդ որոշումը:

Պակ Ամանակ-Մեսրոպի գերեզմաններուն վրայ

Պ. Գնդամ գրով մը կ'առաջարկէր որ Մեծ Յորհեանքի առթիւ հետագային Կաթողիկոսին և յնդերի որ Տանկահայոց անունով պակ մը ընել այս Օշակունց Ս. Մեսրոպի գերեզմանին վրայ, նոյնպէս յանձնարարել Մուշի առաջնորդին որ պակ զնել այս Ս. Մանակի և թագուհիանց գերեզմաններուն վրայ: Ազգային միութեան մեծ անբը Յետոյ կարգադրեցաւ յայտնաբերելու հետեւեալ երեք գիւրերը. —

Ա. Գ ի Բ

Ազատութեան փորձ Առնապէս Ազգ. Երեսփոխանական ժողովը Աստուծոյ հայ ժողովուրդը, զորքատարար, ոչ միայն կրթութեան և քաղաքական այլ և զաւանակն բաժա

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՈՆԸ

ՄԵԾ ՏՈՆԸ ԳԱՌԱՆԵՐՈՒՄ

Կ Ա Ք Ա Ի Ա Մ Բ Ե Ր Դ

Մեղրու շրջանի Կարաւարիզի համայնքն ևս անմասն չմնաց:

Տնտեսականութիւնն սկսեց հանդիսով, որ կազմակերպել էր Կարաւարիզի ուսուցչական խումբը: Հանդէսը բաղկացած էր բանաստեղծութիւններից և գրական-երաժշտական բաժնից: Աչակերտների և հասարակութեան ներկայութեամբ եկեղեցում կատարեց կայանակցական հայրագետական մաղթանք, ապա հողեհանգիստ: Եկեղեցում խոսեց Կարաւարիզի կենտրոնական զարգացման ուսուցիչ պ. Յ. Նիկողոսեան, հայ գրի և տպագրութեան նշանակութեան մասին: Եւ նախքան զարժեց իրաւ մատչելի, որով և պարզակց ներկայ եղած հասարակութեան համար օրաց նշանակութիւնը: Նոյն օրն օրնակեց Կարաւարիզի կենտրոնական զարգացման նորակառոյց շէնքը: Հանդէսը բացեց արտօնած շնորհակալութիւն: Ասուցիչ պ. Ա. Տէր-Առաքելեան խօսեց կնոջ դաստիարակութեան մասին: Պ. Յ. Նիկողոսեան փակեց հանդէսը քառ նշանակով, որ նախագրութեան չէ եղել հանդէսն աւելի փառաւոր դարձնելու:

Հանդէսից յետոյ տեղի ունեցան հացկերթիք հանդիսականների մասնակցութեամբ: Նոյն օրը տեղի ունեցաւ յարճողակցութեան մեծ յորհեանք խորհրդացման շուրջը: Պ. Յ. Նիկողոսեան առաջարկեց տարեկան ուսումը շրջանումս դարձնել պարտադիր, պ. Ք. Ասանկեան առաջարկեց զարգացման անունով Սահակ-Մեսրոպեան:

Այս երկու առաջարկներն ևս ընդունեցին մի շարք բարեփոխութիւններ յատկապէս զարգացման վերաբերմամբ: Ուսուցչական խումբը յանձն ասու գրաստութիւնների միջոցով հասկանալի գործնել ժողովրդի համար պարտադիր ուսման անհրաժեշտութիւնն ու նշանակութիւնը: Հասարակութիւնը ցրեց գոհ սրտով:

Ք. Ասանկեան

Բ Ո Ւ Բ Զ Գ Ի Ի Դ

Սուրբաթի շրջանի այս գիւրդում ամսուս 13-ին, կրեակի օր, շրջանի 5 գործակալի առաջնոց արած կարգադրութեան համաձայն, տեղի ունեցաւ յորհեանքական հանդէս ի յիշատակ հայ տառերի 1500 և հայ տպագրութեան 400 ամեակի:

Սուրբաթեան աշնանային հրապանակ առաւուս էր. ժողովուրդը գիւրդից խայտաբղետ ամբողջ զունդ-զունդ զիմում էր Բուրջի եկեղեցին: Մեր, կրեասար, մանկամարդ հարս, պատանի, երկաթ, բոլորն էլ ուրախ, բոլորն էլ զարթ, բոլորն էլ պնեւած տունական հարուստներով, կարծես զիտակցելով օրաց վնասութիւնը, միահամուռ զիմում էին մասնակցելու համազգային այդ Մեծ Տօնին:

Առաւօտեան պատարագից յետոյ, եկեղեցու ընդարձակ բակում խումբներով երկուս հասարակութեան ներկայութեամբ, հողեհանգիստ կատարեց հայ գրի և հայ տպագրութեան բազմախոս վաստակաւորների յիշատակին: Յետոյ տեղի ունեցաւ պարտադրական հանգիս. աչակերտների և աչակերտուհիները արտասանեցին ոտա-

նաւորներ և երկեցին ազգային և ժողովրդական երգեր: Երեկոյան բազմութիւնը ըստըր տպագրութեան տակ հեռացաւ, տանելով իր հետ հայ տառերի և հայ տպագրութեան աւուրգական և ընդմիտար մշակների անմոտանալի յիշատակը:

Մալխաս

ԳՐԱԿԱՆ ՅՈՒՂ

Նմարգրութիւնս գրական ֆոնդի օգտին ստացաւ Տիկ. Գարիս և Արշակ Թաղեաններից 10 ր. որով նախկին ստացածների ևս ունենք 213 ր. 50կ.:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅՈՒՂ

Նմարգրութիւնս զարգացման ֆոնդի օգտին ստացաւ Տիկ. Գարիս և Արշակ Թաղեաններից 15 րու: որով նախկին ստացածների ևս ունենք 122 ր. 92 կ.:

ՄԵԾ ՏՈՆԸ ԹԻՒՐԿԱՅՆԻ ՄԵՋ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԼԻՍՏԸ

Ազգային մեծ յորհեանքներու պաշտօնական հանգանակներ սկսան երէկ (հոկտ. 11-ին), կէտքէնէսը, Ազգային ժողովի նախագահութեամբ մէկ նիստով, որ զուգարեցաւ Դուռ-Գաբուի Մայր եկեղեցիին մէջ, և որուն միջոցին հռչակեցաւ նաև զարգացման ֆոնտի հանգանակութեան բացումը:

Նիստին հանգիսաւոր հանգանակներ աւելի ևս շնչուեցաւ պատմական զէպրով մը զոր ներքազործեց Ազգային ժողովը և որուն կարևորութիւնը ոչ մէկուն ուշադրութեան պիտի վերալի կուզենք անխաղիչ լուսաւորական և աւետարանական (բողոքական) Հայերու միջև զօյացած համաձայնութեան, որ կը շարունակուի իրականացնելու երկու յարանուսանութեանց ազգային կատարեալ միութեանը զուս կրօնական ընաւորութիւն շունեցող բոլոր խնդիրներուն մէջ:

Այս միութիւնը ներազործեցաւ մեծ սկզբունքի մը հիման վրայ, զոր Ազգային ժողովը հռչակեց երէկ և որուն համաձայն Ազգային Սահմանադրութեան սահմանած իրաւունքներն ու պարտականութիւնները հաւասարապէս պիտի տարածելին բոլոր օսմաններն հայ քաղաքացիներու վրայ՝ առանց զաւանտութեան խտրութեան:

Այս սկզբունքին հռչակումն ու լուսաւորականներու և Աւետարանականներու ազգային միութեան ներազործումը տեղի ունեցաւ միահամուռութեամբ, խանդավառ ծափերու մէջ և յոտնկայս:

նույններու, ինչ որ ծանրապէս ազդած է մեր ազգի քաղաքակրթական և պատմական ճակատագրին վրայ: Արդ, ներքոյ ստորագրեալ երեսփոխաններս, համոզուած ըլլալով թէ հասած է ժամանակը այնչա՛ որ հայութեան բոլոր դասնական հատուածները գէթ պէտք է ձգտին ազգային միակ ու բարձրագոյն իտէպլին, — կրթական, բարեգործական ու ազգային քաղաքակրթական համագործակցութեան:

«Համոզուած նոյնպէս թէ հասունցած է այն գաղափարը որով ազգին գաւառական բոլոր հատուածները, պահելով հանգերձ իրենց կրօնական-վարչային ինքնուրոյնութիւնն ու տնկախութիւնը, կարող են գործակցել ազգային, կրթական և բարեգործական բոլոր խնդիրներու մէջ:

«Կառավարկենք Ազգային Ժողովին, որ իբրև նւէր այսօրուան Ազգային Մեծ Տօնին և իբրև նւիրագործուած հայ ժողովուրդի մասւոր ու հոգեկան 1500 ամեայ գործուէութեան, հանդիսաւորապէս յայտարարէ հետևեալ սկզբունքը:

«Ազգային Ժողովը յայտարարելով որ իւրաքանչիւր օսմանեան հայ քաղաքացի, առանց կրօնական խտրութեան, կրնայ լիապէս օգտուիլ ազգային սահմանադրութեան իրաւունքներէն՝ պահպանելով հանգերձ իր խղճի կատարեալ ազատութիւնը, ըստ իր գաւառութեան:

«Կոչ կրնէ Հայ ազգի բոլոր յարանւանութիւններուն՝ որ ընդունելով օրուան Ազգային այս Մեծ Տօնը որպէս խորհրդանշան դէպի համագային միութիւնն առաջնորդող նւիրական գաղափարին, փութան համախմբել սահմանադրութեամբ նւիրագործուած մեր ներքին ինքնավարութեան շուրջ, միացեալ ուժերով բեղմնաւորելու համար այն պատմական դերը որուն սահմանուած է հայ ժողովուրդը իր քաղաքակրթական կոչումին մէջ:

«Վստահ ըլլալով որ մեր այս առաջարկը համաձայն է Ազգային Ժողովի զգացումներուն, կը փափաքինք միաձայնութեամբ նւիրագործուած տեսնել զայն այս հանդիսաւոր նխտին մէջ:

Կը մնանք յարգանքով
Ազգ. երեսփոխաններ

«Ռ. Զարդարեան, Մարկոս Նաթանեան, Յ. Սայապալեան, Յ. Շահրիկեան, Երևանդ Օտեան, Պարզև Փափագեան, Տրդատ ք. Պոյաճեան, Լեոն Սաթեան, տրքթ. Ս. Թէրզեան, տրքթ. Տատուրեան, տրքթ. Փաշայեան, Տ. Տատեան, Գասպար Նէմցէ, Լեւոն Տնտեսեան, Յակոբ Պահրի, Հմայակ Արամեանց, Սմբատ վրդ. Գազազեան, Ս Պէյազեան, Ն. Զաքարեան, տրքթ. Թորգոմեան, տրքթ. Մկրտիչ Գրիգորեան»

Ժողովը յոտընկայս միաձայնութեամբ ընդունեց այս առաջարկը:
Բ. Գիր

«Հայ ազգին գաւառական բոլոր հատուածները ազգային կուլտուրական ինքնավար կեանքի մէջ համախմբելով, համագային Միութիւնը կերտելու մասին՝ այս վայրկեանին իսկ Ազգային Ժողովին կողմէ արտայայտուած զգացումով և հոչակած սկզբունքով ստորուած, որ այդ զգացումը և սկզբունքը այսօր ի պաշտօնէ ի լուր աշխարհի հոչակելէ շատ առաջ, արդէն տիրապետող ձգտումն ու իղձը եղած էին անոնք թրքահայ ներկայացուցչական Ժողովին, — իբր թարգմանը իր պատմական ու քաղաքակրթական կոչումին ու գերին գիտակ հայ ժողովուրդին, —

«Ստորագրեալներս, նախաձեռնութիւնը ունեցածք անպաշտօն կերպով ու անձնապէս բանակցութեան մտնելու հայ ազգի Աւետարանական յարանւանութեան պատկանող հատուածին պոլսարանակ աշքառու և հեղինակաւոր անձնաւորութիւններուն հետ: Այդ բանակցութեանց նպատակն էր պատրաստել հիմերը համաձայնութեան մը. որ, ծնած ըլլալով հայ ազգին մէջ տիրապետող ձգտումէն, ընդ առաջ պիտի երթար Ազգային Ժողովին կողմէ այսօր հոչակած գեղեցիկ ցանկութեան սիրահրաւէր կոչին:

«Մենք զմեզ երջանիկ կը զգանք յայտարարելով թէ, բաղձացած այդ համաձայնութիւնը գոյացաւ ոչ թէ միայն առանց որևէ դժւարութեան, այլ, աւետարանական յարանուանութեան պատկանող յարգելի ազգայինները այնքան պատրաստական գտանք Ազգային Ժողովին արտայայտած համագային միութեան բաղձանքին հանդէպ, որքան մենք զմեզ Դժուար է մեզ համար այս քանի մը սողներուն մէջ խտացնելով բացատրել այն սպաւորութիւնը և այն խանդավառութիւնը զոր մենք, ստորագրեալներս, զգացինք երբ անոնք մեր առաջարկին ի պատասխան, յայտարարեցին թէ՛ Սիմէօն

Մերունին պէս այս երջանիկ օրուան կը սպասէին:

Երբէք չենք տարակուսիր որ ազգային երեսփոխանութիւնը պիտի զգայ այդ անկողմ բացատրութեան մէջ արտայայտուող բուռն տենչանքին գուրգուրալից խորութիւնը:

Գոյացած համաձայնութիւնը, բանաձևուած և երկուստեք ստորագրուած ըլլալով, մէկ օրինակը ներփակ կը մատուցանենք այս պատկառելի Ժողովին, խնդրելով որ միաձայն հաւանութիւնով ընդունի և վաւերացի:

Համաձայնութեան հիմը ճիշտ ու ճիշտ այն սկզբունքն է զոր Ազգ. Ժողովը հոչակեց այսօր: Սկզբունքը այս հանդիսաւոր առիթով նւիրագործուելէ յետոյ, գործնական պայմանները, անոր կիրառումին սկսած պահուն կը մշակին վարչական և պաշտօնական մարմիններու կողմէ և Ազգային Ժողովին վաւերացումին կենթարկին բնականաբար:

«Բազմատեսակ ցաւալի պատճառներ թոյլ չուին դժբախտաբար որ, Ազգային Ժողովը կանուխէն պատրաստուէր, «ազգային անզուգական այս կրկնակ տօնը իրեն արժանավայել ընծայարեութեամբ մը յաւերժացնելու գործին»:

«Սակայն կը կարծենք թէ, համագային միութեան այս առաջին քայլը և անոր նւիրագործումը, Մեծ Յորեւիտին և անոր մարմնացած գաղափարին հանդէպ այնպիսի մեծ նւէր մըն է, որ կը գերազանցէ նւիրական բոլոր ընծաները և կը խայտացնէ մեր թարգմանիչներուն, մեր մաքի ազատագրումին ախոյեաններուն՝ Սահակներուն և Մեսրոպներուն անմահ հոգիները»:

Ստորագրութիւններ

«Ազգ. երեսփոխաններ՝ Հմայակեպ. Դիմաքսեան, Երևանդ վրդ. Փէրտահճեան, Վարդգէս Սերէնյալեան, Յ. Շահրիկեան, Մարկոս Նաթանեան, Երևանդ Օտեան, Ռ. Զարդարեան, Ժագ Սայապալեան, Համբարձում Պոյաճեան»:

Բացվան պայմանագրութիւնը

«Նկատելով թէ ժամանակը հասած և երկուստեք փափաքը արտայայտուած է, որ ազգային գործերու մէջ ազգին տարբեր հատուածներուն պատկանող անհատներ գործակցին նոյն իրաւունքներով և նոյն պարտականութիւններով:

Երկուստեք հասկցած և ընդունուած ըլլալով թէ՛ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին և Հայոց Պատրիարքարանը, ինչպէս նաև Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին և Բողոքականաց Ազգապետարանը իրենց ուրոյն գոյութիւնը պիտի շարունակեն ըստ առաջնոյն,

Հետևաբար ներքոյ ստորագրեալք յետ խորհրդակցութեան և կարծեաց փոխանակութեան, որոշեցին առաջարկել և յանձնարարել երկուստեք իրենց պատկանեալ իշխանութեանց՝ ընդունիլ և նւիրագործել այն սկզբունքը թէ, ամէն գործերու մէջ որոնք զուտ կրօնական հանգամանք չունին, Հայերը պաշտօնապէս վերոյիշեալ երկու եկեղեցիներէն որուն ալ պատկանին, միանան իբրև անդամները միևնոյն ազգին: Այս հասկացողութեամբ, ամէն հայ, պաշտօնապէս վերոյիշեալ երկու Եկեղեցիներէն որուն ալ պատկանի, զուտ կրօնական չեղող ամէն խնդիրներու մէջ, հայ Ազգային Սահմանադրութեանէն հաւասարապէս օգտուի:

Այսպէս, կրթական, բարեգործական և ազգային քաղաքական ամէն գործերու մէջ, առանց բացառութեան, կատարեալ գործակցութիւն տեղի ունենայ:

«Այս սկզբունքը գործադրել անմիջապէս այն գործերուն մէջ և այն տեղերը որ կարելի է, իսկ աստիճանաբար՝ ճոն ուր տեղական պատճառներով անմիջական գործադրութիւնը անկարելի ըլլայ:

Բերա, 10/23 հոկտ. 1910.

«Յակոբ Ճէճիղեան, տրքթ. Պ. Մատթէոսեան, Յ. Գ. Գրիգորեան, Արսէն Շմաւոնեան, Արշակ Շմաւոնեան, Յովսէփ Ճէճիղեան, Պ. Գոնտաեան, Գ. Յ. Ստամպոլլուեան, Գրիգոր Շահպաղ:

Հմայակեպ. Դիմաքսեան, Երևանդ վրդ. Փէրտահճեան, Հայկ Թոճասարեան, Համբարձում Պոյաճեան, Ռուբէն Զարդարեան, Յարութիւն Շահրիկեան, Երևանդ Օտեան, Մարկոս Նաթանեան, Ժագ Սայապալեան, Վարդգէս Սերէնյալեան»:

Այս գիրքը յաճախ ընդմիջեցանք բուռն և խանդավառ ծափահարութիւններով: